

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի տեսական մասի բովանդակության պատրաստման համար անհատ խորհրդատուի մրցույթ**

11 հունվարի 2019թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

*Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Կայուն տուրիզմի զարգացում»  
դասընթացի տեսական մասի բովանդակության պատրաստման համար  
անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:*

Անհատ խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ի համապատասխան չափորոշչային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան,

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ում ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված և իրականացված հեռուստուցման դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիրը և ուսումնական նյութերը,
- ✓ ուսումնական նյութերի մշակման աշխատանքներն իրականացնել՝ համագործակցելով Բազմամասնագիտական թիմի մյուս խորհրդատուների հետ,
- ✓ ուսումնասիրել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի տեղական և միջազգային տեսական նյութեր,
- ✓ համագործակցել ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի հետ՝ 30 շահառուների կարիքների և կարողությունների ուսումնասիրման գործընթացում,
- ✓ համագործակցել ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի հետ՝ մասնակցելով դասընթացի արդյունավետության գնահատման աշխատանքներին,
- ✓ մշակել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի տեսական պարապմունքների բովանդակության և մասնագիտական տերմինների բառարան-տեղեկատուի նախնական տարբերակները,
- ✓ վերանայել և բարելավել ուսումնական նյութերի տեսական պարապմունքների բովանդակությունը և բառարան-տեղեկատուն՝ նկատի առնելով շահառուների շրջանում ՆՈՐԿԵՆՏ ծրագրի ղեկավարի մշտադիտարկման և ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքները:

**Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.**

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	<ul style="list-style-type: none"> <li>✓ Համապատասխան ոլորտում մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ:</li> <li>✓ Ռուսերենի և անգլերենի իմացությունը ցանկալի է:</li> </ul>	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	<ul style="list-style-type: none"> <li>✓ Դասավանդման փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/,</li> </ul>	40

		✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ, ✓ տուրիզմի և սերվիսի ոլորտի պրակտիկ աշխատանքային փորձը ցանկալի է:	
3.	<b>Հատուկ աշխատանքային փորձ</b>	✓ Մասնագիտական դասընթաց(ներ)ի բովանդակության մշակման փորձ, ✓ գիտելիքների ստուգման գործիքակազմի մշակման ու կիրառման փորձը ցանկալի է:	<b>40</b>
	<b>Ընդամենը՝</b>		<b>100</b>

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 1,5 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), [gspi1934@mail.ru](mailto:gspi1934@mail.ru), հեռախոս՝ 093-853-706:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2019 թվականի հունվարի 18-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»  
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ \_\_\_\_\_

Հեռ. \_\_\_\_\_

Էլ. Փոստ \_\_\_\_\_

### Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում»-ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շրջանակներում անցկացվող

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

(ստորագրություն)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.